



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22

Q - 79

23 SEP 2009

10/17  
10/18

22  
Ա-79

Ա.Ի ԵՏԱՐԱՆ

ՀԱՏ

ՂՈՒԿԱՍՈՒԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԴՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Printed in Austria.

ՎԻԷՆՆԱ  
Ամերիկան Աստուածաշունչի Ընկերութիւն

1931

5240

115.02.2013

3777

Ա. Ի Ե Տ Ա. Ր Ա. Ն

## ԸՍՏ ՂՈՒԿԱԾՈՒԻ

ԳԼՈՒԽ Ա.

- 1 Որովհետեւ շատերը մեր մէջ հաստատ գիտցուած  
բաներուն վրայավ եղած պատմութիւնը կարգի գնեւ-
- 2 լու ձեռք զարկին, ննչպէս սկիզբէն աչքով տես-  
նողները և խօսքին սպասաւոր եղաղները աւտոդեցին
- 3 մեղի, Եւ ալ որ սկիզբէն այն ամէն բաներուն ճշգու-  
թեամբ աեղեկացեր էի, յարժար գտաեցի կարգու
- 4 գրել քեզի, ով պատուական Յէսփիլոս, Որպէս զի  
սորված բաներուգ սոսուզութիւնը իմանաս:
- 5 Հրէաստանի Հերովդէս թագաւորին օրերը նպրայի  
գտասկարգութենէն Զաքարիա անունով քահանայ  
մը կար, որուն կինը Ա. Հարանի աղջիկներէն էր, և ա-
- 6 նոր անունը Եղիսաբէթ, Ու երկուքն ալ Ա. սոսուծոյ  
տուժե արդար էին, և Տէրովը բարը պատուիրանք-  
ներուն ու իրաւունքներաւն մէջ անարատութեամբ
- 7 կը քալէին Եւ զաւակ չունէին, վասն զի Եղիսաբէթ-  
անուլ էր, ու երկուքն ալ օրերնին անցաւցած էին:
- 8 Ու երբ մնիկա իր գտասկարգութեան օրերը հաս-  
նելուն քահանայական պաշտօնը կը կատարէր Ա. ս-
- 9 առածոյ առջեւ: Քահանայութեան սոլորութեանը



20373-59

- պէս իրեն ինկաւ որ Տէրոջը ասաճարը մտնէ խնկար-  
 10 կութիւն ընէ: Եւ ժողովուրդին լուսը բազմութիւնը  
 11 գուրզը աղօթքի կայներ էին խունկին ատենք: Ու  
  երեւաւ անոր՝ Տէրոջը հրեշտակը, որ կայներ էր  
 12 խունկի սեղանին աջ կողմը Եւ Զաքարիս երբ ահ-  
 13 սու, շփոթեցաւ, ու անոր վրայ վախ մը ինկաւ: Եւ  
  հրեշտակը լսաւ անոր, Մի վախնար, Զաքարիս, վասն  
  զի քու աղօթքի լսուեցաւ, և քու կինդ հզիսարեթ-  
  քեզի որդի մը պիտի հնանի, ու անոր անունը \*Յովլ-  
 14 հաննէս դնեա: Եւ քեզի ուրախութիւն ու ցնձռւթիւն  
  պիտի ըլլոյ, և շատերը անոր ծնանելսան վրայ պիտի  
 15 ուրախանան: Վասն զի Տէրոջը առջեւ մեծ պիտի ըլ-  
  լոյ, և գինի ու օղի պիտի չխմէ: և գեռ իր մօրը որու-  
 16 վայնէն Սուրբ Հոգիսվ պիտի լցուեի: Ու Խարոյէլի  
  որդիներէն շատերը իրենց Տէր Աստուծոյն պիտի  
 17 դարձնէ: Եւ ինք անոր առջեւն պիտի գայ Խզիսով  
  հոգիսվը ու զօրութիւնսվը, հայրերուն սիրաները որ-  
  դիներուն վրայ դարձնելու, և անհնազանդները՝ որ-  
  դարձներուն իմաստութեանը, որպէս զի Տէրոջը րա-  
 18 բեկարդ ժողովուրդ մը պատրաստէ: Եւ Զաքարիս  
  լսաւ հրեշտակին, Խնչով զիտնամ պյու բանը, ո-  
  րսվէտեաւ ես ծեր եմ, ու իմ կինս իր որերը անցուցած  
 19 է: Եւ հրեշտակը պատասխան տալով լսաւ անոր,  
  ես եմ Գարդիւլ որ Աստուծոյ առջեւ կը կայնիմ, ու  
  զրկուեցայ քեզի զրուցելու: և պյո բաներուն աւե-  
 20 տիսը քեզի տալու: Եւ ահա համբ պիտի ըլլան գուն,  
  ու պիտի չկրնաս խօսիլ մինչեւ պյոն օրը՝ որ պյո բա-  
  ները ըլլան, քանզի չհաւատացիր իմ խօսքերուս, ու

- 21 բոնք իրենց ատենին պիտի կատարուեն: Ու ժողո-  
  վուրդը Զաքարիսայի կը սպասէր, և կը զորմաննային  
 22 անոր ասաճարին մէջ ուշանալուն վրայ: Ու երբ գուրդ  
  ելու, չեր կրնար խօսիլ անոնց հետ, և իմացան որ  
  ասաճարին մէջ տեսիլք մը տնառած է: ու ինք նշա-  
 23 նոլ կը խօսէր անոնց հետ, և համբ կը կենար: Ու ե-  
  ղաւ որ երբ անոր պաշտօնին օքերը լմացան, իր առւնը  
 24 գնաց: Եւ այն օքերէն եաքը անոր կինը Խզիսարեթ-  
  յրացաւ, ու հինգ ամիս ինքզինք կը պահէր, և կ'սպէր,  
 25 Արագէս ըրաւ ինձի Տէրը այս օքերս, որ է՛ համ նա-  
  յեցաւ Նախատինքո մարդոց մէջէն վերցնելու:  
 26 Ու վեցերորդ ամսուն մէջ Գարդիւլ հրեշտակը  
  Աստուծմէ զլիկուեցաւ Գալիկենցի մէկ քաղաքը որուն  
 27 անունը Խազարեթ էր, Կոյսի մը՝ մարդու մը նշան-  
  ուած, որուն անունը Ցավէտի էր, Գաւեթի առւնէն,  
 28 և այն կղզին անունը Մարիամ էր: Ու հրեշտակը  
  անոր գալով լսաւ, Ողջզին քեզի ով շնորհընկալ հայ,  
  Տէրը քեզի հետ է: գուն կանանց մէջ օրհնեալ եաւ  
 29 Եւ զանիս առենելով անոր խօսին վրայ շփոթեցաւ,  
  ու ինքնիրեն կը մասաձէր թէ ի՞նչպէս ըստ պիտի ըլ-  
 30 լոյ այս ողջզինը: Եւ հրեշտակը անոր լսաւ, Մի վախ-  
  նար, Մարիամ, վասն զի Աստուծմէ շնորհք գտար:  
 31 Եւ ահա պիտի յդանաս ու որդի մը պիտի ծնանիս,  
 32 և անոր անունը Ցիրուաս պիտի դնեա: Անիկս մեծ պի-  
  տի ըլլոյ, ու Բարձրելցն օրդին պիտի ըսուեի, և Տէր  
  Աստուծ պիտի տայ անոր իր հօք Գաւեթի մթո-  
  ռը: ու Ցավէտի տանը վրայ յաւիտեան պիտի թո-  
 33 գաւորէ, Եւ անոր թագաւորութիւնը վերջ պիտի  
 34 չունենաց: Ու Մարիամ լսաւ հրեշտակին, Խնչպէս  
  պիտի ըլլոյ այդ բանը, որտվէտեաւ ես այր մարդ չեմ

\*Այսինքն, Տէրոջը չնորհք

- 35 գիտեր, Եւ հրեշտակը պատասխան տալով՝ ըստ անոր, Հոգին Սուրբ պիտի գայ քեզի, ու Յարձրելցին զօրութիւնը քու վրադ Հովանի պիտի ըլլաց. ուստի այն քեզմէ ծնանելու սուրբը Աստուծոյ Որդի պիտի պիտի  
 36 ըստեւ, Եւ աչա քու պղգականդ Եղիսաբեթ՝ անիկա իր պառւութեան ատենը արու զաւակով մը յշի է, ու ասիկա այն ամուլ ըստածին վեցերորդ ամիսն է,  
 37 Վասն զի Աստուծոյ քով բնաւ բան մը անհնարին  
 38 չըլլար Եւ Մարիամ ըստաւ, Աչա էս Տէրոջը աղախինն էր, քու ըստծիդ պէս թող ըլլաց ինծի, ու հրեշտակը անոր քովէն գնաց:  
 39 Այն օրերը եւս Մարիամ ու արտօնօք լեռնա-  
 40 կողմը Յաւդոյի էք քաղաքը գնաց. Եւ մտաւ Զա-  
 41 քարիայի տունը ու Եղիսաբեթի բարե տուաւ Եւ եղաւ որ երր լսեց Եղիսաբեթ՝ Մարիամի բարեւը, մանուկը անոր որովլյնին մէջ խաղաց, ու Եղիսա-  
 42 բեթ Սուրբ Հոգիսվ լեցուեցաւ. Եւ բարձր ձայնով մը կանչեց ու ըստաւ, Օքնեալ ես դուն կանանց մէջ  
 43 և օրհնեալ է քու որովայնիդ պատովը. Եւ սյս ինծի  
 44 ուրեկէ եղաւ, որ իմ Տէրոջ մայրը ինծի զայ: Վասն զի աչա երր քու բարեկիդ ձայնը ակոնչիս եկաւ, մանուկը որովայնիս մէջ խաղաց ուրախութենէն:  
 45 Եւ երանի՛ անոր որ \*հաւատացեր է, քանզի՛ պիտի կատարուին այն բաները որոնիք Տէրոջմէ ըստեցան  
 46 իրեն, Եւ Մարիամ ըստաւ իմ անձու կը մեծցնէ Տէրը,  
 47 Եւ իմ հոգիս ուրախացաւ իմ Փրկիչ Աստուծովս  
 48 Վասն զի իր աղախինն խոնարհութեանը նոյեցաւ. քանզի աչա ասկէ ետեւ բոլոր աղքերը ինծի երանու-

\* Կամ, հաւատացեր է թէ

- 49 թիւն պիտի տան, Վասն զի Հզօրը ինծի մեծամեծ  
 50 բաներ ըստաւ, ու անոր անուվը տուրը է: Եւ անոր ո- զօրմութիւնը իրմէ վախցողներուն վրայ է աղգէ  
 51 աղգ: Իր բաղաւկովը զօրութիւն ցուցուց, ցիր ու ցան ըրաւ ամբարտաւունները իրենց սրտին խորհուրդովով:  
 52 Զօրաւորները էրեց ամթուներէն իշեցուց, ու խո-  
 53 նորհները բարձրացուց: Անօթիները բարիքներով լե-  
 54 ցուց, և հարուսանները պարապ ճամիեց: Օգնութիւն  
 ըրաւ իր Խորոյէլ ծառային: Է ողսրմութիւնը միտք  
 55 բերելով, Խնձոր ինք խոսեցաւ մեր հոյրերուն, Ար-  
 բարհամի ու անոր սերանդին յաւիտեան:  
 56 Եւ Մարիամ անոր քով երեք սմիտի չսփ կեցաւ,  
 ու իր տունը դարձաւ:  
 57 Ու Եղիսաբեթի ծնանելու ժամանակը լեցուեցաւ,  
 58 ու որդի մը ծնաւ Եւ լսեցին անոնք որ անոր բոլոր-  
 անիքը կը բնակիին, ու անոր աղգականները, որ Տէրը  
 անոր վրայ իր մեծ ողսրմութիւնը ցուցուց, և անոր  
 հետ կ'ուրախանացին:  
 59 Ու եղաւ որ ուժերորդ օրը աղան թլփառելու ե-  
 կոն, և զանիկա իր հօրը անունովը Զափարիս կը կո-  
 60 չին: Խոկ անոր մայրը պատասխան տուաւ ու ըստաւ,  
 61 Ոչ հապս Յովհաննէս պիտի կոչուի: Եւ անոր ըսին  
 թէ Քու աղգականներուդ մէջ մէկը չկոյ որ սյս ա-  
 62 նունով կոչուի: Աչք կ'ընէին անոր հօրը թէ ի՞նչ  
 63 անուան կ'ուղէ որ անիկա կոչուի: Ան ալ տափառկ  
 մը ուղեց ու գրեց ըսերով Յովհաննէս է տառը տ-  
 64 նունը, ու ամէնը զարմացան: Եւ իսկայն բացուեցաւ  
 անոր բերտնը ու անոր լեզուն, և կը խօսէր ու կ'օրհ-  
 65 նէր զԱստուծուծ: Եւ վախ մը ինկաւ այն ամէնուն  
 վրայ՝ որոնք անսնց բոլորտիքը կը բնակիին, ու այս

ամեն բաները Հրեաստանի բալոր լեռնակողմը կը  
 66 դրացուէին, Եւ ամեն լազները իրենց սիրաերան մէջ  
 գրին, ու կ'ըսէին, Արդեօք այս աղջոն ի՞նչ պիտի  
 ըլլայ. ու Տէրոջը ձեռքը անոր հետ էր:  
 67 Եւ անոր հայրը Զաքարիա Սուրբ Հոգիով լեցուոծ՝  
 68 մարդարէացաւ ու ըստ, Օքնեւալ ըլլայ Խաբայէի Տէր  
 Աստուածը, որ այցելութեան ելաւ և իր ժաղովուր-  
 69 դին փրկութիւն ըստ: Ու մեղի փրկութեան եղինուր  
 70 մը հանեց իր Դաւիթի ծառապին առնեն. (Խնչպէս  
 սուրբերան բերնովլ խօսեցաւ, որոնք աշխարհի սկիզ-  
 71 բէն ի վեր անոր մարդարէներն էին.) Փրկութիւն մեր  
 թշնամիներէն և բոլոր մեզ ասալներուն ձեռքէն,  
 72 Ողբանութիւն ընելու մեր հայրերուն վրայ, և իր սուրբ  
 73 ուխտը միտք բերելու, (Այն երգուածը զօր մեր հօրը  
 74 Արքահամի ըստու,) մեզի առաջ, Որպէս զի մեր թշն-  
 ամիմներան ձեռքէն ապաստելով՝ առանց վախի  
 75 զանիկա պատշաճք Արբութիւնով ու արդարութիւ-  
 76 նով անոր առջև մեր իւնածին բոլոր օրերան մէջ, Եւ  
 գուն, ով մանուկ, Բարձրելոյն մարդարէն պիտի կոչ-  
 ուիս, վասն զի Տէրոջը երեսին առջևէն պիտի եր-  
 77 թառ՝ անոր ճամբաները պատրաստելու, Անոր ժողո-  
 վուրդին զիացնելու էրենց փրկութիւնը իրենց մեզ-  
 78 քերուն թողարթիւնովը, Մէր Աստուծոյն գթած ո-  
 լզրմութեանը համար, որով Ծագող ու եւ ու վե-  
 79 բէն մեղի այցելութեան եկաւ՝ խաւարի և մոհուան  
 սուուերի մէջ նասողներան լցոյ առալու, ու մեր սո-  
 քերը խաղաղութեան ճամբուն մէջ շնուկելու:  
 80 Եւ տղոն կը մեծնար ու կը զօրսնար հոգիով և  
 անսպասներան մէջ էր մինչև այն օրը երբ ինք իս-  
 րոյէի երկցաւ:

- 1 Ու եղաւ որ այն օրերը Օգաստա կայսրէն հրամանէ  
 2 ելաւ որ բոլոր աշխարհ գրամի: (Այս առաջին աշ-  
 խարհազիրը եղաւ Կիւրինափ Ամերիուզի վրայ կուսա-  
 3 կալւոթիւն ըրած առնենք) Եւ ամենը կ'երթային  
 աշխարհազիրը մտնելու՝ ամէն մէկը իր քաղաքին  
 4 մէջ, Յավակի աղ Գալիկլույէ, Նազարէթ քաղաքէն,  
 ելաւ դեզ ի Հրեաստան Դաւիթի քաղաքը որ հէթ-  
 է-չէմ կ'ըսուի, (իրեն Դաւիթի առնեն ու ազգ ա-  
 5 տոչէն ըլլալուն համար,) Աշխարհազիրը մտնելու  
 Մարիամի հետ մէկաեղ որ իր նշանածն էր, և յդի  
 6 էր: Ու եղաւ որ երբ անոնք հան էին, անոր ծնանելու  
 7 օրերը լցուեցան: Եւ իր անդրանիկ որդին ծնաւ, ու  
 խանձարութավ փաթթեց և զանիկա մասրին մէջ  
 պառկեցաց, վասն զի իջեւանին մէջ իրենց աեզ  
 չկար:
- 8 Եւ այն աեզը հավիներ կային գաշտի մէջ կեցած,  
 որոնք իրենց հօտերուն գիշերուան պահպանութիւնը  
 9 կ'ընէին: Եւ աչա Տէրոջը հրեշտակը անոնց վրայ ի-  
 շու, ու Տէրոջը փառքը անոնց բոլորակիքը ծագեցաւ.  
 10 ու խիստ շատ վախցան: Եւ հրեշտակը ըստ անոնց,  
 Մի վախնաք, վասն զի աչա ևս ձեզի մեծ ուրուսու-  
 թեան աւետիս կու տամ, որ բոլոր ժողովուրդին պիտի  
 11 ըլլայ. Վ ասն զի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւի-  
 12 թի քաղաքին մէջ, որ Օձեալ Տէր է: Եւ այս ձեզի  
 նշան մը ըլլայ. մտնուկ մը պիտի գանէք խանձարու-  
 13 բով փաթթուած ու մուուի մէջ պառկած: Եւ իո-  
 կոյն ուն հրեշտակին հետ երինոյին զօրքերու բոլ-  
 մաթիւն մը եղաւ, որոնք զԱստուած կ'օքնէին ու  
 14 կ'ըսէին, Երինչին բարձրութեան մէջ Աստուածոց

- փառք, ու երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ  
 15 հաճութիւն։ Ու եղաւ որ երբ հրեշտակները աննայմէ  
 երկնք վերցան, համեւները բրարու ըսին, Եկէք  
 մինչև թիթլէչէմ երթանք, ու տեսնենք Ի՞ւ բնաւէ  
 16 այս եղած բանը, զար Տէրը մեզի ցուցուցի Ու եկան  
 արտարնօք, և գտան Մարիամը ու Յավակիք և մուռըն  
 17 մէջ պառկած մանուկը։ Ու երբ տեսան, իմացուցին  
 սյն խօսքին վրայով որ այս մանուկին համար իրենց  
 18 զրոցուեցաւ, Եւ ամէնք որ կը լսէին, կը զարմանա-  
 յին այն բաներուն վրայ զորոնք համեւները իրենց կը  
 19 զրոցեին, Բայց Մարիամ այս ամէն բաները կը պա-  
 20 հէր, ու իր սրաին մէջ կը մտածէր։ Եւ համեւները  
 դարձան, կը փառաւորէին ու կ'օրհնէին զԱստաւած  
 սյն ամէն բաներուն համար զրոնք լսեցին ու տեսան,  
 ինչպէս իրենց զրոցուած էր։  
 21 Ու երբ ութ օրերը լման եղան \*մանուկը թրիասե-  
 լու, անոր անունը Յիսուս դրուեցաւ, որ հրեշտակէն  
 կոչուած էր՝ գեւ ինք Յօհէ սովորյնին մէջ չյղացած։  
 22 Ու Մովսէսի օրէնքին համեմատ երբ տանոնց մաք-  
 րութեան օրերը լմցան, Երուասովէմ տարին զանիկու  
 23 Տէրոջը առջև հանելու, (ինչպէս գրուած է Տէրոջը  
 օրէնքին մէջ, թէ Ամէն արու որ արդանդ կը բանաց  
 24 Տէրոջը առջը ըսուեի,) Ու Տէրոջը օրէնքին մէջ ըսուա-  
 ծին պէս ընծայ տալու՝ զցյդ մը տարակ կամ ա-  
 25 զաւնիք երկու ձագ։ Եւ ահա Երուասովէմ մէջ մարդ  
 մը կար, սրուն անունը Արմէօն էր, ու այն մարդը ար-  
 դար ու աստուածավախ էր, և Խարայէիք միիթարու-

\*Ուսան, զանիկու  
†Ուսան, անոր

- թեանը կը սպասէր, ու] Սուրբ Հոգին անոր վրայ էր,  
 26 Եւ անոր յայտնուած էր Սուրբ Հոգիէն թէ մաք  
 27 պիտի չտեսնէ, մինչև Տէրոջը Օծեալլ աեսնէ։ Եւ  
 Հոգիով տաճարը եկաւ, ու երբ ծնողքը ըերին Յի-  
 սուս մանուկը, որպէս զի օրէնքին սովորութեանը պէս  
 28 անոր համար ընեն, Խար ալ զանիկու եր գիրկը առաւ,  
 29 և օրհնեց զԱստաւած ու ըսաւ, Ալ հիմա, ով Տէր,  
 արձակես քու ծաւագ խաղաղութիւնով քու խօս-  
 30 քիդ, համեմատ, Վասն զի իմ աչքերս տեսան քու  
 31 ֆրկութիւնդ, Զոր ըսոր ժողովուրդներուն առջեւ  
 32 պատրաստեցիր, Լայս մը հեթանոսները լսաւորելու,  
 33 և փառք քու Խարայէլ ժողովուրդիդ։ Եւ Ցավուէփ  
 ու անոր մայրը զարմացած էին այն բաներուն  
 34 վրայ՝ սրոնք անոր համար կը խօսուէին։ Ու Արմէօն  
 օրհնեց զանոնք, և անոր մօրը Մարիամի ըսաւ,  
 Ահա այս հանուլէ Խարայէլի մէջ շատ մարդոց իշխա-  
 լուն ու ելեւն համար, ու հակառակութեանն նպա-  
 35 առակ մը ըլլալու համար կեցած է. (Եւ քու սրտէդ  
 ալ թուր մը պիտի անցնի.) սրպէս զի այսպէս շատ  
 միրտերէ խորհուրդներ յայտնուեն։  
 36 Եւ հա էր Աննա մարդարէն, Փանուէլի աղջիկը,  
 Ասերի ցեղէն, ասիկա իր օրերը շատ անցուցած էր,  
 Երկանը հետ եօթը տարի կենապով իր կուսութեան  
 37 ժամանակէն, Եւ սրբեւարի էր դրեմէ ութառնըսրս  
 տարուան, որ տաճարէն չը զասուեր, հազար ծոմնվ  
 և աղօթքավով Աստուծայ ծառոյութիւն կընէր գիշեր  
 38 ու ցորեկ Եւ ասիկանոյն ժաման եկաւ, ու Տէրոջը գո-  
 հութիւն կու տար, ու անոր վրայով կը խօսէր այն ամէ-  
 նուն սրոնք Երուասովէմ մէջ փրկութեան կը սպասէին։  
 39 Ու երբ ամէն ըսն կատարեցին Տէրոջը օրէնքին

համեմատ, նորէն Գաղղիկա գարձան իրենց հազար  
 40 ըէթ քաղաքքը Եւ մանուկը կը մեծնար ու հոգւով  
 կը զօրանար իմաստութիւնով լեցուած, ու Աստու-  
 ծոյ շնորհքը անոր վրայ էր:

41 Եւ անոր ծնողքքը ամէն տարի զատկի առնին Երաւ-  
 42 սաղէմ կ'երթպյին: Ու երբ անիկա տաստերկու տա-  
 րեկան եղաւ, տոնին առլորութեանը պէս երբ անոնք  
 43 Երուսաղէմ եղան, Եւ երբ այն օրերը լիցուցին ու  
 նորէն ետ գարձան, Յիսուս մանուկը Երուսաղէմ  
 44 մասց. և Յովուշի ու անոր մայրը չեն գտաեր. Հազար  
 կարծելով թէ անիկա ճամփորդներան չետ է, մէկ  
 օրուան ճամփայ գտցին, ու կը փնտաէին զանիկա  
 45 իրենց աղգտականներան և ճանչուարներան մէջ Ու երբ  
 չդատան, նորէն Երաւաղէմ գարձան զանիկա փնտաւ-  
 46 լու: Ու եղաւ որ երեք օրէն ետքը տաճարին մէջ  
 գտան զանիկա, որ վարդապահներան չետ նստեր էր  
 47 անոնց մանկի կ'ընկը ու անոնց բաւ կը հարցնէր Եւ  
 ամէն անոր ականջ գնողները կը վարժմանցին անոր  
 48 իմաստութեանը ու պատասխաններան վրայ: Ու երբ  
 տեսան զանիկա, տարչութ մասցին. և անոր մայրը ըստա-  
 մանոր, Որդեալ, ինչո՞ւ համար մեզի այդպէս ըրբի, ոչա-  
 քու հայրդ ու ես խիստ վշտացած քեզ կը փնտաէ-  
 49 ինք, Եւ ըստ անոնց, Զիս ինչո՞ւ կը փնտաէիք.  
 չէի՞ք գիտեր թէ ինձի պէտք է որ իմ Հօրու Քառա-  
 50 ըլլար: Եւ անոնք չտակցան այն խօսքը զր իրենց  
 51 զուցեց: Եւ իջաւ անոնց չետ ու գնաց նապարէթ,  
 և անոնց հնազանդ էր. բայց անոր մայրը այս ամէն  
 խօսքերը իր սրահն մէջ կը պահէր:

52 Եւ Յիսուս կը զարգանար իմաստութիւնով ու հա-  
 սակով և Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք գտնելով

- 1 Տիբերիոս Կայորին թագաւորութեան տասնըշինդե-  
 րուդ տարին, Պատուացի Պիղաստոսի Հրէտաստնի վրայ  
 կուսակալութիւն ըրած տաենը, ու Հերովդէսի Գա-  
 լիւացւոց վրայ չըրրորդապետութեան տաենը, և  
 անոր եղբօք Փիլիպպոսի Խտուրացւոց և Տրաքոնաց-  
 ւոց երկրին վրայ չըրրորդապետութեան տաենը, և  
 Կիւսանիսիյի Սիլինացւոց վրայ. չըրրորդապետու-  
 թեան տաենը, Եւ Աննացի ու Կոյխափոյի քահանա-  
 յուպետութեան տաենը Աստուծոյ խօսքը եղաւ Զա-  
 քարիայի որդւոյն Յովչաննէսի վրայ անապատին  
 3 մէջ: Ու անիկա եկաւ Յորդանանու բալոր կողմերը,  
 և ապաշխարութեան մկանութիւնը կը քարտզէր մեղ-  
 4 քերութուղութեան համար. Խնչպէս Եսայի մարդո-  
 ւեին խօսքերան գիրքին մէջ գրուած է ըսկով, Ա-  
 նապատի մէջ կանչողին ձոյնը, Տէրոջլ ճամբան  
 5 պատրաստեցէք, անոր շատեղները շիտկեցէք. Ումէն  
 ձար պիտի լցուածի, և ամէն լեռ ու բլուր պիտի ցած-  
 նայ, և ծուռը պիտի շիտկուի, և խօստաւքսրա տե-  
 6 ղըլը հարթ ճամբանէր պիտի ըլլան: Եւ ամէն մար-  
 մին Աստուծոյ փրկութիւնը պիտի տեսնէ:  
 7 Ու իրմէ մկրասելու եղող ժողովուրդներուն ըստա-  
 իթերու ճնանդներ, ո՞վ իմացուց ձեզի գալու լոր-  
 8 կութենէն փափչիլ Ուրիմն ապաշխարութեան որ-  
 ժամաւոր պատուղներ ըրբէք, և մի սկսիք ձեր ներսի-  
 դին ըսել թէ Մենք մեզի հոյր՝ Աբրահամը ունիք,

- քանզի կ'ըսեմ ձեզի որ Աստված կարող է այս քա-  
9 բերէն Աբրահամի որդիներ հանել: Աւ հիմա կացինը  
ծառերուն արմատին բռն՝ կը գրուի. ուստի ամէն  
ծառ որ բարի պատուշ չը երեր, կը կարուի ու կրակը  
10 կը ձգուի: Եւ ժողովուրդները կը հարցնէին իրեն ու  
11 կ'ըսեին, Ուրեմն Բ՞նչ ընենք: Պատասխան տուաւ ու  
ըստ անսնց, Ով որ երկու հանդերձ ունի, թող հիւ  
չունեցողին ասյ. և ալ որ կերակուր ունի, նոյնպէս  
12 ընէ: Մաքսաւրդներ ալ եկան մկրասելու, ու ըօին  
13 անոր, Վարդապետ, մենք Բ՞նչ ընենք: Ան ալ ըստ  
անսնց, Ձեզի Հրամանուածէն աւելի բան չպահան-  
14 չքք: Զինուարներ ալ կը հարցնէին անոր ու կ'ըսէին,  
Եւ մենք Բ՞նչ ընենք, ըստ անսնց, Մե՛կը մի հարըս-  
տահարէք. և բուրո՛ւ կը այսպարտութիւն մի ընէք,  
ու ձեր թօշակով բաւականացէք:

15 Երբ ժողովուրդը կը սպասէր, և ամէնը իրենց սիր-  
աերուն մէջ կը մոսածէին Յովշաննէսի համար՝ թէ  
16 ա՞ս է արդեօք Քրիստոը, Յովշաննէս պատասխան  
տուաւ ամէնուն ու ըստ, ևս ձեզ ջրով կը մկրասէ,  
բայց ինձմէ աւելի զօրաւորը կու գայ, սուն կօշիկնե-  
րուն կապերը քակելու արժանի չեմ ամփակ ձեզ  
17 պիտի մկրասէ Հոգեւով Արքալ և կրակով. Որուն չե-  
ծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ, ու  
ցորենը իր ամերար պիտի ժողվէ, և յարդը չմարտու  
18 կրակով պիտի պղրէ: Ուրիշ շատ բաներ ալ կը քա-  
րովէ՛ ժողովուրդը յարդուելով

19 Բայց Հերովդէս չըրսորդապետաւ անկէ յանդիման-  
ուելով իր եղածոր կնոջ Հերովդիսայի, համար, և բո-

- լոր չարսութիւննեկոււն համար, զարնեք Հերովդէս  
20 գործեց, Այն ամենաւն վրայ զայս ալ աւելցուց, որ  
Յովհաննեսը բանափի մէջ գոցեց:

21 Առ երբ միքատեցան բազոյ ժողովաւրդը, և Յիսուս  
ալ միքատելով աղօմք կ'ըներ, երկինք բացուեցաւ,  
22 Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր երեւութով աղանձնիի  
պէտ անոր վրայ իջաւ, ու երկինքնեւն ձայն մը եկաւ,  
որ կ'ըսէր, Դաւն ես իմ սիրելի Որդիս, քեզի հաւնեց-այ  
23 Եւ ինքն Յիսուս ակսեր էր գրեթէ երեսուն տարե-  
կան ըլլալ որ (Ինչպէս կը կոստառէր) սրդին էր Յովան-  
24 փի, որ Հեղին, որ Մատաֆի, Որ Ղեկի, որ Մեղքի,  
25 որ Յաննէի, որ Յավակի, Որ Մատաֆինայի, որ Աճով-  
26 սի, որ Նաւումի, որ Խաղի, որ Նանգէի, Որ Մատի,  
որ Մատաֆիսայի, որ Աէմէկի, որ Յովակի, որ Յուդա-  
27 յի, Որ Յովհաննայի, որ Բեայի, որ Զօրաբարէկի, որ  
28 Սալամիլի, որ Ներիի, Որ Մեղքի, որ Ադգիի, որ  
29 Կոլսումի, որ Եղմակադի, որ Էրի, Որ Յովակի, որ  
30 Եղմագսրի, որ Յովիմի, որ Մատաֆի, որ Ղեկի, Որ  
Սիմէօնի, որ Յուդայի, որ Յովաննի, որ  
31 Եղիսակիմի, Որ Մելեսայի, որ Մայնանի, որ Մատո-  
32 թայի, որ Նաթանի, որ Գաուիթի, Որ Յեսոսի, որ Ով-  
33 բէթի, որ Բոսսի, որ Սաղմանի, որ Նասանի, Որ Ա-  
մբագտի, որ Արամի, որ Կարոնի, որ Փարէկի, որ  
34 Յուդայի, Որ Յակոբի, որ Դասհակի, որ Աբրահամի,  
35 որ Թարայի, որ Նաբարի, Որ Աերսագի, որ Ռադումի,  
36 որ Փաղէկի, որ Երեբի, որ Սաղայի, Որ Կոյնանի, որ  
37 Արփաքաստի, որ Աէմի, որ Նպի, որ Ղամէրի, Որ Մա-  
թուադպայի, որ Ենակի, որ Յորեգի, որ Մաղակէլի,  
38 որ Կոյնանի, Որ Ենավի, որ Աէթի, որ Ադամի, որ

- 1 Եւ Յիսուս Հոգւով Արբով լեցուած՝ Յորդանանէ  
 2 գարձու, ու Հոգին անազատը տարուեցաւ, Եւ  
  քառասուն օր Սատանայի փորձուեցաւ, ու ոյն օրերը  
  բան մը չկերաւ, և այն օրերուն լմնալէն ետեւ ա-  
  նօթեցաւ։
- 3 Ու Սատանայ ըստ անոր, Եթէ Աստուծոյ Որդին  
 4 ես, ըսէ այդ քարին որ հաց ըլլաց, Եւ Յիսուս պա-  
  տասխան տուու անոր ու ըստ, Գրուած է թէ Ոչ  
  միայն հացով կապրի մարդ, հոգա Սատանայ ամէն  
  խօսքով։
- 5 Եւ Սատանայ բարձր լեռ մը հանելով զանիկա,  
  աշխարհի բարը թագաւորութիւնները ցուցաց անոր
- 6 վայրկեանի մը մէջ՝ Եւ Սատանայ ըստ անոր, Այս  
  ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը քեզի պիտի  
  տամ, վասն զի ինձի յանձնաւած է, և որու որ ու-  
 7 զեմ՝ կու տամ զանիկա, Ուստի եթէ գուն իմ տա-  
  ջես էնու երկրպագութիւն ընես, ամէնը քեզի ըլլաց։
- 8 Եւ Յիսուս պատասխան տուու անոր ու ըստ,  
  \*Գրուած է թէ Քու Տէր Աստուծոյց երկրպագու-  
  թիւն ընես, ու միայն զանիկա պաշտես։
- 9 Եւ զանիկա տարու երաւաղէմ ու տաճարին աշ-  
  տարակին վրայ կայնեցաց, ու ըստ անոր, Եթէ  
  գուն Աստուծոյ Որդին ես, քեզ ասկէ վար ձգէ.
- 10 Վասն զի գրուած է թէ Իր հրեշտակներան պիտի  
 11 ապարէ քեզի համար որ քեզ պահէն. Ու ձեռքեր-  
  նուն վրայ պիտի վերցնեն քեզ որ չըլլաց թէ ուպետ

\*Ուստի, Ետիս գնա, Սատանայ, վասն զի գրուած

- 12 քարի զարնես Եւ Յիսուս պատասխան տուու ու  
  ըստ անոր, Քսուած է թէ Քու Տէր Աստուծութիւնը կա-  
 13 չփորձես Ու երբ Սատանայ ամէն փորձութիւնը կա-  
  տարեց, ատեն մը ետ կեցաւ անկէ։
- 14 Եւ Յիսուս Հոգին զօրութիւննը Գալիլեա գար-  
  ձու, ու անոր համբաւը այն գտաւուին ամէն կող-  
 15 մերը տարածուեցաւ Եւ ինք անոնց ժողովարաննե-  
  րուն մէջ կը սորվեցներ, ու ամէնէն կը փառաւոր-  
  ուէր։
- 16 Ու եկաւ Նազարեթ, ուր ինք մեծցած էր, և իր  
  սովորութեանը պէս շաբաթ օրը մոտաւ ժողովարանը,
- 17 ու ելաւ որ կարգաց Եւ տուին անոր Եսայի մարգա-  
  րէին զիրքը, ու երբ զիրքը բացաւ, գտաւ այն աեղը՝  
 18 ուր գրուած էր, Տէրոջը Հոգին իմ վրա է. \*վասն զի  
  զիս օծեց աղքատներուն աւետարան քարոզելու, զիս  
 19 զրկեց կարած սիրտ ունեցաղները թշշկելու, Գերի-  
  ներուն աղատութիւն և կյուրերուն աեսութիւն քարո-  
  զելու, հարատահարութիւն կրազները աղատ թող
- 20 ասլու, Տէրոջը ընդունելի տարին քարոզելու, Եւ  
  զիրքը գոցելով տուու պահառարին ու նստաւ, և  
  ժողովարանը եղողներուն ամէնը աչքերնին անկած
- 21 անոր կը նայէին: Եւ սկսու անոնց ըսկէ, Այսօր այս  
  գրուածը կատարուեցաւ ու ձեր ականջները լսեցին:
- 22 Եւ ամէնը անոր վրայ կը վկայէին, ու կը զարմա-  
  նային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն վրայ:
- 23 ու կ'ըսէին, Ասիկա Յափէկի որդին չէ: Եւ ըստ  
  անոնց, Իրաւ որ գուք ինձի պիտի բակը ոյց առակը,  
  բժիշկ, քու անձդ թշշկեացափ բաներ լսեցինք որ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՈՅՆ ԲԻBLIOGRAPHY

ՀԱՅՈ-ԱՐՄ ՀՀ

- Կափառնայումի մէջ եղան, հսու ալ ըրէ քու քառ-  
 24 զպիկի մէջ Եւ ըստու, ձշմարիս կ'ըսեմ ձեզի, թէ  
 25 Մարդորէ մը իր քաղաքին մէջ ընդունելի չէ: Եւ  
 արդորե կ'ըսեմ ձեզի, թէ Շատ որբեարիներ կոյին  
 Եղիսյի օրերը Խարացէլի մէջ երբ երեք տարի ու վեց  
 ամիս երկինք գոյուեցաւ, ոյնային որ մեծ սով եղաւ  
 26 բոլոր երկրին մէջ Բայց Նշիս աննացմէ մէկուն չըսր-  
 կուեցաւ, Հապս միայն Սիբանացւց Սարեիթու +  
 27 վարին մէջ որբեարի կոնջ մը Եւ շատ բարաներ կու-  
 յին Խարացէլի մէջ Եղիս մարդարէին տառենը, ու  
 պնացմէ մէկը չըսրեցւեցաւ, Հապս միայն Կէւմոն  
 28 Ասրի: Եւ ժողովարանին մէջ ամէնն ալ բարկու-  
 29 թիւնով Լեցուեցան՝ երբ այս հօգէւը լսեցին. Ու  
 ելան զանիկա քաղաքէն դուրս հանեցին, ու տարին  
 զանիկա մինչև այն լեռանը ցցուած ծովրը, որուն  
 վրայ իրենց քաղաքը շնուած էր, որպէս զի զանիկա  
 30 բարձր տեղէն վար ձգեն: Բայց ինք անոնց մէջէն  
 անցաւ գնաց:
- 31 Եւ իջաւ Գոյիլեայի Կափառնայում քաղաքը, ու  
 32 շաբաթ օրերը կը տորիցնէր աննաց: Եւ կը զարմա-  
 նային անոր վարդապետութեանը վրայ, վաճն զի իշ-  
 33 խանութիւնով էր անոր խօսքը: Եւ ժողովարանին  
 մէջ մարդ մը կար, որ պիղչ գեր ոգի ունէր, ու մեծ  
 34 ձոյնով մը աղաղաղակեց՝ Ըստով Թող տուր, գուն  
 մեզի հեռ ի՞նչ բան ունիս, Յիսուս Հաղովրեցի, միթէ  
 մեզ կորնցնելու եկար, գիտեմ քեզ ով ես. Առ-  
 35 առւծոյ Սուբբը: Եւ Յիսուս ասսեց անոր՝ լսելով  
 Պապոնձէ ու ել ասկէ, ու գեր զանիկա Կէրոյ Քը-  
 նուունէրուն մէջ աղաղաղը գետինը զարկաւ, և ելաւ անձէ,  
 36 ու վնաս մը չտուաւ անոր: Եւ զարմանք եկաւ ամէ-

- նուն վրայ, և իսպառ հետ կը խօսէին ու կ'ըսէին,  
 Այս ի՞նչ խօսք է որ իշխանութիւնով և քրութիւ-  
 37 նով կը հրամանյէ պիղչ պիներուն, ու կ'եղեն: Եւ  
 անոր համբաւը տարածուեցաւ շըտկայ գաւառին  
 ամէն տեղիբու:
- 38 Ու ժողովարանին ելլովը Արմենի առներ մսու:  
 39 Արմենի զքանչն ալ ասասիկ չերմավ կը տանջուեր,  
 40 ու անոր համբաւ աղոտչեցին իրեն: Եւ Յիսուս անոր  
 վրայ կայնելով ասասեց չերմին, որ թողուց զանիկա.  
 և շուտ մը ելաւ ու անոնց սպասուարութիւն կ'ընէր:  
 41 Եւ արեւին մարը մտած տանենը՝ ամէն անոնք որ  
 ունէին տեսակ տեսակ ցաւերավ հիւանդներ, իրեն  
 բերին զանոնք. ինք ալ անոնցմէ ամէն մէկուն վրայ  
 42 ձեսք գնելով բժշկեց զանոնք, Դեկը ալ կ'ելլէին  
 շատերէն, կ'աղաղակէին ու կ'ըսէին թէ Դուն ևս  
 Քրիստոս, Աստուծոյ Որդին. և ինք կը ասսէր ու  
 թող չեր տար անոնց որ խօսին, վասն զի գիտէին թէ  
 ինք Քրիստոսն է:
- 43 Ու երբ ցորեկ եղաւ, ելաւ ու գնաց անսպատ տեղ  
 մը և ժողովսւրդները կը փնտուէին զանիկա. Եկան  
 մինչեւ անոր, ու կը ասփակէին զանիկա որ իրենցմէ չեր-  
 44 թայ. Բայց անիկա լսուա անոնց, Պէտք է ինձի որ ուրիշ  
 քաղաքներու. ալ Աստուծոյ թոգաւորութիւնը քա-  
 45 րուեմ, քանզի այս լսոնն համոր զրկուած եմ Ու  
 Գոյիլեայի ժողովարաններուն մէջ կը քաղաքէր:

- 2 Գիննեսարքեթի ծովակին քով կեցեր էր. Ու տեսառ երկու նաւեր որոնք ծովակին քով կեցեր էին, և ձկնորսները անոնց մէջէն ելած՝ ուռականները կը լւատ-
  - 3 յին. Խնդ այն նաւերին մէկուն մէջ մասու որ Սիմոնին էր, և աղաջեց անոր որ քիչ մը ցատարքէն ժաշտու մէջ ատանի. և նաւելով նաւուն մէջէն ժողովարգներուն կը սորվեցնէր:
  - 4 Ու երբ խօսելին գաղտարեցաւ, ըստ Սիմոնի, Առաջ տար Նաւաց գէպ ի խորունկը, և ուռականներնիդ ձգե-
  - 5 ցէք չուտ սրատլու։ Եւ Սիմոն պատասխան տալով ըստ անոր, Վարդապետ, բոլոր զիշերս աշխատեցանք ու բան մը լրացնեցինք. բոյց քու խօսքիդ հա-
  - 6 մար ուռականը ձգեմ։ Ու երբ զայս ըրին, խխտ շատ ձուկեր ժողովեցին մէջը, ու իրենց ուռականը կը պա-
  - 7 տղուտեր։ Եւ աչք կ'ընէին միւս նաւուն մէջ եղաղ իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց. և եկան ու երկու նաւերն ալ լեցուցին, մինչև որ ընկցելու
  - 8 մօտ էին, Սիմոն Պետրոս երբ տեսառ, Յիսուսի ծովներուն ինկաւ ու ըստաւ, Տէր, իմ քովէս մէկդիքի գնա, 9 քանիդ ես մեղաւոր մարդ մըն եմ։ Վասն զի ապշութիւնը պատեց զանիկա և անոր հետ եղաղ ամէնը՝
  - 10 սին իրենց բռնած ձուկերուն օրսին համար. Նշյալէս ալ Զեւեդեսափ որդիները, Յակոբոս և Յալէյաննէս, սրոնք Սիմոնի ընկերներն էին. ու Յիսուս ըստ Սիմոնի, Մի վախնար, տակէ ետև մարդոց որսորդ.
  - 11 պիտի ըլլասու Եւ նաւերը ցամաքը հանելով ամէն բան թողուցին ու անոր ետևէն դացին։
  - 12 Ու եղաւ որ երբ ինք քաղաքի մը մէջ էր, ահա մարդ մը բրոստութիւնով լեցուն՝ երբ Յիսուսը տեսաւ, երեսի վրայ ինալով աղաջեց անոր ու ըստաւ,

- 13 Տէր, եթէ ուղիս՝ կրնաս զիս մաքրել Եւ Յէսուս իր  
ձեռքը երկնցնելով դպաւ տնօր, ու ըստ, կ'ուզեմ,  
մաքրուէ. և շատ մը բրատաւթիւնը անկէ գնաց.  
14 Ու ինք պատուիրեց անօր որ մարդո՛ւ չըսէ, հապա,  
ուստի, Գնա քեզ քահանային ցուցուր, և Մովկէսի  
պատուիրածին պէս քու մաքրուելուդ ընծան տուր,  
15 անոնց վկայութիւն ըլլալու համար Եւ անօր գրա-  
յով խօսքը աւելի կը տարածուէր ու շատ ժողո-  
վարդներ կը ժողվուէին մտիկ ընկելու, և անով իրենց  
16 հիւանդութիւններէն բժշկուելու: Ու ինք անսպաս  
տեղեր կը քաշուէր և աղօթք կ'ընկրի...  
17 Ու եղաւ որ օր մը ինք կը տրվեցներ, ու փարիսէ-  
ցիներ և օրինաց վարդապետներ նստած էին, որոնք  
Գալիլեայի ու Հրէսաստանի ու Երուսաղէմի բոլոր  
գիւղափառականներէն ժողվածած էին. ու Տէրոջը զօ-  
18 բութիւնը Նէրէա էր զանոնք բժշկելու: Եւ աշա քա-  
նի մը մարդիկ անդամանաց մարդ. մը մահէճովը բե-  
րին, և հնարը կը վնասուէին թէ ի՞նչպէս զանիկաներս  
19 խոթեն ու գնեն անօր առջև: Ու երբ բազմութենէն  
համբայ չէին գտներ՝ որ անկէ ներս խոթեն զանիկա,  
տանիկին վրայ ելոն, և զանիկա կդմինտներուն մէ-  
ջէն մահէճովը մէջտեղը Յիսուսի առջև եծեցուցին:  
20 Եւ անիկա տեսնելով անոնց հաւատաբր՝ ըստ անօր,  
21 Ով մարդ, քու մէղքերդ քեզի ներտած էն: Եւ  
գովիները ու փարիսէցներ սկսան խորհիլ ու ըսիւ  
Ով է ասիկա՝ որ հայհոյութիւններ կը խօսի. ՞վ  
կրնայ մէղքերու թողութիւն տալ, բայց միուն Աստ-  
22 տուած: Եւ Յիսուս խոնալով անոնց խորհուրդները՝  
պատասխան տեւաւ ու ըստ անոնց, Արթաելնուդ՝  
23 մէջ թնչ. կը խորհիք: Ո՞քը աւելի գիւրին է, քու

- մեղքերդ քեզի ներուած են ըստիլը, թէ Ելիր ու  
 24 քայլ՝ ըստիլը: Բայց որպէս զի գիտնաք թէ Ռոդին  
 մարդոց իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու  
 թուղութիւն տալու, (բառ անդամնալցջին,) Քեզի  
 25 կ'ըսէմ՝ Ելիր մահիճդ առ ու տունդ գնաւ: Ան ալ  
 իսկայն անսնց առջև ելաւ, ու վրան առաւ ինչ բանի  
 վրայ որ պատկած էր, և գնաց իր տունը, ու Աստու.  
 26 ծոյ փառք կու տար Նւ ամէնը ապշած մատցին, ու  
 Աստուծյա փառք կու տային, և վախով լցուած  
 կ'ըսէլն թէ Այսօր նորանշան բաներ տեսանք:  
 27 Եւ ոյս բաներէն ետեւ ելաւ անչի, ու տեսաւ մաք-  
 սաւոր մը որուն անունը Դեւի էր. որ մաքս ընդու-  
 նելու տեղը նատեր էր, ու ըստ անոր, Ետեւս եկուր:  
 28 Ան ալ թողաւց ամէնը և ելաւ գնաց անոր ետեւէն:  
 29 Ու Դեւի անոր մեծ կոչունք մը ըստ իր տանը մէջ.  
 և շատ բազմութիւն կար մաքսաւորներու և ուրիշ-  
 30 ներու՝ որ անսնց հետ սեղան նստեր էին: Նւ անսնց  
 դպիրները ու փարիսեցիները տրատոնչ կ'ընէին անոր  
 աշակերտներուն ու կ'ըսէին, ինչու համոր մաքսա-  
 ւորներուն և մեղաւորներուն հետ կ'ուտեւք ու կը  
 31 խմէք: Եւ Յիսուս պատասխան տալով ըստ անսնց,  
 Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա չիւտանդնե-  
 32 րուն, Ես արդարները կանչելու չեկայ, հապա մե-  
 ղաւորները՝ ապաշխարութեան:  
 33 Անոնք ու ըսին անոր, ինչու Յովհաննէսի աշխ-  
 կերտները շատ անդամ ծոմ կը պահէն և աղօթք-  
 ներ կ'ընէն, նոյնպէս ալ փարիսեցիներուն ու կ'ուր-  
 34 նէք. և քակինները կ'ուտեւն ու կը խմէն, Անիկոս ու  
 ըստ անսնց, Կինո՞ք հարանիքին աղողը ծոմ պահէլ  
 35 տալ՝ քանի որ փետան իրենց հետ է: Բայց օրեր պիտի

- գան՝ որ երբ փետան իրենցունէ վերցուի, ապա այն օ-  
 36 րերը ծոմ պիտի պահէն: Առարկ մէն ալ ըստ անսնց,  
 թէ Մէկը չնգեր նոր լսմի կտոր հին հանգերձի  
 վրայ, եթէ ոչ այն նորը պատուածք ալ կ'ընէ, ու  
 հինգածին հետ ալ չմիաբանիր պահն նոր լսիւն եղած:  
 37 կտորը: Եւ մէկը նոր գինին հին ամիկերու մէջ չդնէր,  
 եթէ ոչ նոր գինին \*ամիկերը կը պատաէ, ինք կը  
 38 թափի ու ամիկերը կը կորսուին. Հապա նոր գինին նոր  
 ամիկերու մէջ գնելու է, ու երկուքն ալ կը պահէն:  
 39 Եւ մէկը հին չենին խմէլէն ետեւ անմիջապէս նորը  
 շուգեր, քանզի կ'ըսէ թէ Հինը առելի ախորժելի է:

## ԳԼ. Զ

- 1 Ու եղաւ որ երկորդ տառջին շաբաթ օրը ինք ար-  
 աերուն մէջն կ'անցնէր, և իր աշակերտները շոքէնէ  
 հասկեր փրցնելով՝ ձեռքերնուն մէջ կը շփէին ու  
 2 կ'ուտէին: Ու փարիսեցիներէն ոմանք ըսին անսնց,  
 3 Ի՞նչ կ'ընէք, վըր արժան չէ ընել շաբաթ օրը: Եւ  
 Յիսուս պատասխան տալով անսնց ըստ, Զէ՞ք կար-  
 գացեր գուք Դաւիթի ըրածը, երբ անօթեցաւ ինք  
 4 և անոնք որ իրեն հետ էին, ինչպէս անիկոս Աստու-  
 ծոյ տունը մտաւ, և տաշաւորութեան հացերը ա-  
 ռաւու ու կերաւ, և տուտ անսնց ալ որ իրեն հետ  
 էին, զարոնք Յուրի՞՛ օրինտուր չէ ուտեւ բայց միայն  
 5 քահանաներուն: Եւ ըստ անսնց, Օրդին մարդոց  
 շաբաթին ալ ակըն է:  
 6 Ու եղաւ որ ուրիշ շաբաթ օր մըն ալ ինք ժողո-

\*Ուսանէ, հին ամիկերը

- վարանը մտաւ ու կը սորվեցնէր. և հան մարդ մը  
 7 կար որուն աշ ձեռքը չորցած էր: Եւ դպիրները ու  
 փարփակները անոր կը սպասէին՝ թէ շաբաթ օրը  
 լսնէտ կը բժշկէ՞ որպէս զի ամբասանութեան առէր:  
 8 Ի գտնեն անոր դէմ: Խակ ինք գիտանպով՝ անոնց խոր-  
 հուրդները, ըստ այն մարդուն որուն ձեռքը չորցած  
 էր, Եղիք, մշջանով կայնէ. ան ալ ելաւ կայնեցաւ:  
 9 Այն ասեն Յիսուս ըստ անոնց. Զեղի բայ Ի հար-  
 ցնեմ: Շաբաթ օրը ի՞նչ արժան է. լարի՞ք ընել թէ  
 10 չարիք ընել հոգի մը ապրեցնէլ թէ մեռցնել. Եւ  
 շուրջանակի ամենուն վրայ նոցելով ըստ անոր,  
 Զեռքդ երկնցուր, ան ալ այնպէս ըրսու, ու անոր ձեռքը  
 11 սղացու միւսին պէս Եւ անոնք կսասաղութեամբ  
 լիցուեցան, ու իրարաւ հետ կը խուսէին թէ ի՞նչ  
 ընեն Ֆիսուսի:  
 12 Ու եղաւ որ այն օրերը լեռը ելաւ աղօթք ընելու,  
 ու բոլոր զեշէրը Աստուծոյ աղօթք ընելով՝ անցուց:  
 13 Ու երբ առաջ եղաւ, կանչեց իր աշակերտները, ու  
 անոնցմէ առաւերկու հոգի ընտրեց, զրոնք առաք-  
 14 եալ ալ անուանեց. Արմեն՝ զր Պետրոս ալ ան-  
 ուանեց, և անոր եղայրը Անդրէասը, Յակովոսը ու  
 15 Յայշաննէսը, Փիլիպոսը և Բարթողոմէոսը, Մատ-  
 թէոսը և Թովմասը, Արքէոսուն Յակովոսը և Նա-  
 16 խանձայոց ըստուած Արմենը, Յակովոսի Եպիսոպը Յու-  
 գան, և Խակարփալսացի Յուգան, որ և մասնիչ ե-  
 17 ղաւ: Եւ անոնց հետ իշնելով՝ տափարակ տեղ մը  
 կայնեցաւ, նաև իր աշակերտներուն ժողովը՝ ու մեծ-  
 բազմութիւն մը ժողովուրդներու՝ բայր Հրեասաննէ  
 ու Երուսաղէմէ: և Տիրոսի ու Արդոնի ծովելքերէն.  
 18 Որոնք եկան անոր խօսերը մտիկ ընելու, ու իրենց

- չիւտնդութիւններէն բժշկուելու. և պիղծ ոգիներէն  
 19 նեղութիւն կրողներն ալ Եւան ու կը բժշկուեին Եւ  
 բայր ժողովը: բայր կ'ուզէր իրեն դպչել վասն զի  
 զօրութիւն կ'ելլէր իրմէ ու տաճնը կը բժշկէր:  
 20 Եւ ինք իր աշքերը դէս կը աշակերտները վերցուց  
 ու ըստւ, Երանի՛ Եւկ աղբատաներուդ, վասն զի ձեռն  
 21 է Աստուծոյ թագաւորութիւնը Երանի՛ Եւկ որ  
 հիմու անօմիկ էք, վասն զի պիտի կշատանգա, Երանի՛  
 22 Եւդ որ հիմու կու լոք, վասն զի պիտի խնդագի: Երա-  
 նի՛ է ձեզի՛ երբ մարդիկ ձեզ ատեն, ու երբ ձեզ  
 էտէնց ընթառ-Եւենէն մերժեն ու նախատեն, և ձեր  
 վրայով գէշ անուն հանեն Որդւոյ մարդոյ պատճա-  
 23 ռաւ: Ուրախ եղէք գուք այն օրը ու ցնծացէք, որ  
 ահա ձեր վարձը շատ է երկինքը. վասն զի իրենց  
 24 հոյրերը այդպէս կ'ընէին մարդարէներուն: Բայց  
 վայ ձեզի հարուստներուդ, վասն զի ձեր միմիթարու-  
 25 թիւնը առած էք: Վայ ձեզի որ կուշո էք, վասն զի  
 պիտի անօմենաք. վայ ձեզի որ հիմու կը ծիծաղիք:  
 26 վասն զի սուգ պիտի ընէք ու լոք: Վայ ձեզի երբ  
 \*մարդիկ ձեր վրայով աղէկ խօսնին, վասն զի իրենց  
 հոյրերը այդպէս կ'ընէին սուտ մարդարէներուն:  
 27 Բայց կ'ըսեմ ձեզի որ մոնէկ կ'ընէք, Արեհեցէք ձեր  
 28 թշնամիները, ձեզ ատաղներուն բարի ըրէք. Ձեզ  
 անհժողները օրհնեցէք, ձեզի նեղութիւն տառողնե-  
 29 րուն համար աղօթք ըրէք, Ան որ քու մէկ ծնօտիդ  
 կը զարնէ, միւսն ալ մօտեցուր անոր. և ան որ քու  
 վերարկուդ, քեզմէ կը հանէ, մի արգիլեր անկէ շո-  
 30 պիկդ ալ Այն ամենուն որ քեզմէ կ'ուզէ՝ առւր, ու

- 31 քու բաներդ առանցին պահանգ մի պահանջեր: Եւ ինչպէս կ'ուղէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ առ  
32 նայ այնպէս ըրէք: Եւ եթէ դուք ձեզ սիրողները  
սիրէք, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւոր-  
33 ներն ալ կը սիրեն զիրենք սիրողները: Եւ եթէ դուք  
ձեզի բարի ընտղներուն բարի ընեքր ի՞նչ շնորհ կ'ու-  
նենաք. վասն զի մեղաւորներն ալ նայն բանը կ'ընեն:  
34 Եւ եթէ այնպիսի մարդոց փոխ տաք՝ սրոնցմէ յոյս  
ունիք առնելու, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի  
մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ կուտան, սր-  
35 պէս զի նայն չափով ետ առնեն: Հապա սիրեցէք  
դուք ձեր թշնամիները, ու բարի ըրէք, և փոխ տուեք  
առանց փոխարէնի մը սպասելու, և ձեր վարձքը շտո  
պիտի ըլլայ, ու Բարձրելցյն որդիները պիտի ըլլաք.  
վասն զի անիկա բարերար է ասերախտներուն ու չա-  
36 բերուն: Ուրեմն զթած եղէք, ինչպէս ձեր Հայրն ալ  
37 զթած է: Մի դատեք, ու պիտի չգտասուիք. մի դա-  
տապարտեք, ու պիտի չդատապարտուիք. ներեցէք,  
38 ու ձեզի պիտի ներուի. Տուեք, ու ձեզի պիտի տրուի.  
աղէկ չափով կախուած, ցնցուած, լեկիլեցուն պիտի  
տրուի ձեր դոգը. քանիվ որն չափովը սրով դուք կը  
չսփէք, ձեզի պիտի չափուի:
- 39 Առակ մըն ալ ըստ տնոնց, Միթէ կոյըը կուրին  
կրնայ առաջնորդութիւն ընկլ. չք որ երկուքն ալ  
40 փոսը պիտի կյանան: Աշակերտը իր վարդապետէն մեծ  
չէ, բայց ամէն կատարելապէս վարժուածը իր վար-  
դապետին պէս կ'ըլլայ:
- 41 Եւ ինչը քու եղօրդ աչքին մէջի շիւղը կը տես-  
42 նես, ու քու աչքին մէջի գերանին չես նոյիի: Կոմը  
ի՞նչպէս կրնա ըսել քու եղօրդ, Եղբար, թող

- տուր որ աչքիդ մէջի շիւղը հանեմ: և դուն քու աչ-  
քիդ մէջի գերանը չես տեսներ. կեղծաւոր, առաջ  
քու աչքէդ գերանը հանէ, ու ետքը պարզ պիտի  
տեսնես քու եղօրդ աչքին մէջի շիւղը հանելու:  
43 Քանզի չկոյ բարի ծառ մը որ չար պատուղ բերէ, ոչ  
44 ալ չար ծառ մը որ բարի պատուղ բերէ. Վասն զի ա-  
մէն ծառ իր պատուղէն կը ճանչցուի. քանզի փուշե-  
րէն թուղ չեն քաղեր, ու մորենիէն խաղող չեն  
45 ժողվեր Բարի մարդու իր սրանին բարի գտնձէն բա-  
րութիւն կը բղիւէ, և չար մարդը իր սրոմին չար գան-  
ձէն չարութիւն կը բղիւէ. վասն զի իր բերանը սրտին  
աւելցուքէն կը խօսի:
- 46 Եւ ինչը զիս Տէր, Տէր, կը կոչէք, ու ըստած բա-  
47 ներս չէք կատարեր: Այն ամէնը որ ինձի կու գայ և  
իմ խօսքերս կը լսէ ու զանոնք կը կատարէ, ձեզի  
48 ցուցնեմ թէ սրո՛ւ կը նմանի: Անիկա տուն շնոր-  
մարդու մը կը նմանի, որ փորեց ու խորունկցուց, ու  
հիմը վէմի վրայ դրու. և ջուրերուն յորդած տակէնը  
գեալ զարկաւ այն տանը, ու չլրցաւ զանիկա շար-  
49 ժել վասն զի վէմի վրայ հաստատուած էր, Բայց ան  
որ էմ հունէրը կը լսէ ու չկատարեր, կը նմանի այն  
մարդուն՝ որ հողի վրայ տաւանց հիմի տուն կը շնէ.  
որու գետը զարկաւ, և շուտ մը վլաւ, ու այն տանը  
կործանուամը մեծ էր

- 1 Ու երբ իր բալոր խօսքերը ժողովուրդին ականջնե-  
2 բուն խօսէւ լմնցուց, մտաւ կափառնայում: Եւ հար-  
եւրապետի մը ծառայ ծանը հիւանդացած՝ մօտ էր

- 3 մեռնելու, որ սիրելի էր անոր: Երբ Յիսուսի վրայով լսեց, Հոգեաներէն ունէ ու ծերեր զրկելով՝ ազատէց  
4 անոր որ գայ իր ծառան ապրեցնէ: Անոնք ալ եկան Յիսուսի և թափանձանօք կ'աղաչէին անոր ու կ'ըսէին թէ Անիկոս արժանի է՝ սրու այս շատհն պիտի ընես.  
5 Վասն զի մեր ազգը կը սիրէ, ու ժողովաբանը անիկա շինեց մեղի: Եւ Յիսուս անոնց հետ գնաց. Երբ առւնէն շատ հեռու չէր, հարիւրապեալ զրկեց անոր ժանի ու բարեկամմենր, ու ըստու անոր, Տէր, մի յոդնիր, վասն զի ես արժանի չեմ որ գուն իմ յարկիս տակ  
7 մտնես. Անոր համոր ես ինքինքն ալ արժանի չոեւ պեցի քեզի գալու. հապա խօսքով զրուցէ, և իմ  
8 ծառաս պիտի բժշկուի: Վասն զի ես ալ իշխանութեան տակ գրուած մարդ մըն եմ, ու իմ հրամանիս տակ զինուորներ ունիմ: և ասոր կ'ըսէմ: Գնա, ու կ'երթայ. և միւսին՝ թէ Եկուր, ու կու գայ. և ծա-  
9 ռայիս՝ թէ Այս բանը ըրէ, ու կ'ընէ: Յիսուս այս բաները լսելով՝ զարմացաւ անոր վրայ. և իր հետեւն գացող ժողովլուրդին գարձաւ ու ըստու, Զեղի կ'ըսէմ: որ Խորսյէլի մէջ անգամ ես այսչափ հաւատաք չգտայ:  
10 Ու պատգամուորները նորէն տուն գարձան, և հիւանդ ծառուն առողջացած գտան:  
11 Ու եղաւ որ հետեւեալ օրը քաղաք մը կ'երթար, որուն անունը նային էր, և անոր հետ կ'երթային իր  
12 աշակերտաներէն շատերը ու մեծ բաղմութիւնն Ու երբ քաղաքին գրանը մօտեցաւ. ոհաս մեռել մը դուրս կը հանէին, իր մօրը մէկ հասիկ տղան. և ա- անիկա սրբեւարի էր, ու քաղաքին շատ ժողովլուրդը  
13 անոր հետ էր: Եւ Տէրը զանիկա մեռնելով՝ իդշաց  
14 անոր վրայ, ու ըստու անոր, Մի լսր: Եւ մօտենալով՝

- դադաղին դպտւ, ու տանալիները կանգ առեն. և ըստու,  
15 Ով պատանին քեզի կ'ըսէմ: Եկիր: Ու մեռելը ելաւ նստաւ, ու սկսու խօսիլ ու տուաւ զանիկա իր մօրը:  
16 Եւ ամէնն ալ վախով ըստնուեցան, ու զԱստուած կը փառաւորէին՝ ըսելով թէ Մեծ մարդարէ մը եւեր է մեր մէջ և թէ Աստուած իր ժողովլուրդին այցե-  
17 լութիւն ըրաւ: Եւ այս ձայնը անոր վրայով բոլոր Հրեաստան ելաւ, ու բոլոր ջրակայ տեղերը:  
18 Եւ Յովհաննէսի պատմեցին իր աշուկերտները այս  
19 ամէնն ըստներուն վրայով Յովհաննէս ալ իր աշուկերտներուն երկուքը իրեն կանչեց, և զանան Յիսուսի զրկեց՝ ըսելով Դուն ա՞ն ես որ գալու էիր, թէ ուրիշ  
20 մը սպասենի: Եւ այն մարդիկը եկան անոր ու ըսին, Յովհաննէս մկրտիչը մեղ զրկեց քեղի, ու կ'ըսէ, Դուն ա՞ն ես որ գալու էիր, թէ ուրիշի մը սպասենի:  
21 Եւ նոյն ժամանւն շատերը բժշկեց Երենց հիւանդութիւններէն ու հարուածներէն և չար սպիներէն, ու  
22 շատ կոյրերու տեսութիւն շնորհեց: Եւ Յիսուս պատասխան տալով անոնց ըստու, Գացէք Յովհաննէսի պատմեցէք ինչ որ տեսաք ու լսեցիք. որ կոյրերը կը տեսնեն, կազերը կը քալեն, բորսաները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ'առանեն,  
23 աղքատաներուն աւետարան կը քարոզուի: Եւ երանի անոր որ իմ վրայովս չգայթակղիր:  
24 Ու երբ Յովհաննէսի զրկած մարդիկը գացին, Յէսուս սկսու ժողովլուրդներուն ըսել Յովհաննէսի համար, Ի՞նչ տեսնելու ելափ անտպատին մէջ եղէ՞դ  
25 մը հովէն շարժուած: Հապա ի՞նչ տեսնելու ելափ փափուկ հանդերձներ հագած մա՞րդ մը. ահա անոնք որ փառաւոր հագուստներով ու փափկութեան

- 26' մէջ են, թագաւորական պալատներն են: Հապա ի՞նչ  
տեսնելու ելաք. մարդարի<sup>Յ</sup>, այս, կ'ըսեմ ձեզի, մար-  
27 գարեւ մըն ալ աւելի: Վասն զի տափկա է՝ որու հա-  
մար գրուած է, Ահա եսիր գեսպանս կը զրկեմ քու  
երեսիդ առջևէն, ու քու ճամբար պիտի պատրաստէ  
28 քու առջևէդ: Քանզի կ'ըսեմ ձեզի, կիներէն ծնած-  
ներուն մէջ Յավշաննէս մկրտիչէն մեծ մարդարէ  
շայ. ասկայն Աստուծոյ թագաւորութեանը մէջ  
ամէնէն պղոտիկը անկէ մեծ է:
- 29 Եւ բալը ժողովուրդը ու մաքսաւրները երբ լսե-  
ցին, արդարացուցին զԱստուծո, որ Յավշաննէսի  
30 մկրտութիւնսվը մկրտուեցան, Բայց փարիսեցիները  
և օրինականները իրենց անձին դէմ Աստուծոյ խոր-  
հուրդը անարդեցին, և անկէ չմկրտուեցան:
- 31 \*Ուստի որու նմանցնեմ պյս ազգին մարդիկը, և  
32 որու կը նմանին կը նմանին աղջոց, որոնք շուկաները  
նատելով իրարու կը կանչեն ու կ'ըսեն, Փող չնչե-  
ցուցինք ձեզի, ու չխաղացիք, ողը կորդացինք ձեզի,  
33 ու չլացիք: Վասն զի Յավշաննէս մկրտիչ եկաւ, ոչ  
հաց կ'ուտէր և ոչ գինի կը խմեր, ու կ'ըսէր, Դիւ  
34 կայ անոն ներսիդին: Որդին մարդոյ եկաւ, կ'ուտէ  
ու կը խմէ, և կ'ըսէր, Ահա ուտող և արբեցող մարդ:  
35 մը, մաքսաւրներու ու մեղաւորներու բարեկամ: Եւ  
իմաստութիւնը արդարացաւ իր բալը որդիներէն:
- 36 Փարիսեցիներէն մէկը կ'աղաչէր անոր որ իրեն չետ  
հաց ուտէ: ան ալ փարիսեցին տունը մտաւ ու սե-  
37 զան նստաւ: Եւ ահա քաղաքին մէջ մեղաւոր կին  
մը կար, երբ իմացաւ թէ անիկա փարիսեցին տունը

- սեղան նստաեր է, շիշ մը անուշահոտ իւղ բերաւ.  
38 Ու ետեի կողմէն անոր սովերան քով կիցեր՝ կու-  
լար, և արցունքավը սկսաւ անոր սովերը թրչել ու  
իր գլխուն մազերավը կը սրբէր, և կը համբարէր ա-  
39 նոր սովերը, ու իւղավ կ'օծէր: Ու երբ տեսաւ փա-  
րիսեցին, որ զանիկա հրաւիրեւ էր, կ'ըսէր իր միաբին  
մէջ Ասիկա եթէ մարդարէ ըլլար, պիտի գիտնար  
թէ ո՛վ և ի՞նչպէս կին է իրեն դպչաղը, վասն զի մե-  
40 զաւոր է: Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըստաւ  
անոր, Արման, քեզի բան մը ունիմ ըսելու, ան ալ  
41 ըստաւ, Ըսէ, վարդապետ, և ըստ-, Փոխ տուող մը  
երկու պարտական ուներ, մէկը հինգ հարիւր դա-  
42 չէկան պարտք ուներ, ու միւրը միսունն Եւ որպէ-  
չետև հատուցանելու խրապ-նիւն չըւնէին, երկու-  
քին ալ չնորհեց. Հիմն զրուցէ, Անսնցմէ ո՞րը աւելի  
43 պիտի սիրէ զանիկա: Պատասխան տուաւ Արման ու  
ըստաւ, Խնձի սյազէս կ'երեւնայ, թէ որու որ շատ  
44 շնորհեց, ան ալ ըստաւ անոր, Ուղեղ դատեցիք: Ու-  
գաւանալով դէպի ի ոյն կինը՝ ըստ Արմանի, կը տես-  
նե՞ս այս կինը. Ես քու տունդ մտոյ, դուն սովերուս  
ջուր չստուիր, բայց ասիկա է արցունքավը սովերս  
45 թրջեց, և իր \*մազերավը սրբէց: Դաւն ինձի համեսցը  
մը չստուիր, բայց ասիկա հաս մանելէս ի վեր սովերս  
46 համբարէլէն չդադարեցաւ: Դաւն իմ գլուխ ձե-  
թավ չօծեցիր, բայց ասիկա իմ սովերս մանուշահոտ  
47 իւղավ օծեց: Ասոր համար կ'ըսէմ քեզի, Ներսուած  
են ասոր շատ մեղքերը, վասն զի շատ սրբէց. բայց  
48 որու որ քիչ կը ներուի, անիկա քիչ կը սիրէ. Ու

- 49 ըստ անոր, Քու մեղքերդ ներսւած են, Եւ անոր  
չեմ սեղան նստողները պատն իրենց մէջ ըսել Ո՞վ  
է ասիկա որ մեղքերու թողութիւն ալ կու ասյ:  
50 Եւ ինք ըստ կնքը, Քու հաւատքդ քեզ \*փրկեց,  
գնա խաղաղութեամբ:

## ԳԼ. Ը

- 1 Ու եղաւ որ անկէ ետե ա՛լ ինք քաղաքէ քաղաք  
ու գեղէ գեղ պարսելով կը քարոզէր, և Աստուծոյ  
թագաւորութիւնը կ'աւետարանէր, ու տասուերկու-
- 2 քը իրեն չետ եր, Դաեւ քանի մը կիներ՝ որոնք չար ողի-  
ներէ ու հիւանդութիւններէ բժշկուեր էին. Մարիամ  
որ Մագդալենացի կ'լսուեր, ուրկէ եօթը գե ելեր
- 3 էր, Եւ Յովհաննա, Հերովդէսի տանը վերակացուին  
Քուզայի կինը, ու Շուշան և շատ ուրիշներ, որոնք  
իրենց ստացուածքովը դանոր ծառայութիւն կ'ընէին:
- 4 Ու երբ մեծ բազմութիւն ժողվուեցաւ և շատ քա-
- 5 ղափներէ իրեն եկան, առակով մը ըստ անաց, Սերմ  
ցանող մը ելաւ իր սերմը ցանելու. ու ցանած ատենը  
մէկ քանին ճամրուն քոլ ինկու և որդէ որչ կոխ-  
ուեցաւ, ու երկինքի թռչունները կերան զանիկաւ
- 6 Եւ ուրիշ ապառաժի վրոյ ինկաւ, ու բուռածին
- 7 պէս չորցաւ, հայֆ հիթ չունենալուն համոր. Եւ  
ուրիշ փուշերու մէջ ինկաւ, ու փուշերը անոր հետ
- 8 բուռնելով խեղեցին զանիկաւ Եւ ուրիշ աղէկ հողի  
մէջ ինկաւ, ու բուռնելով հարիւրապատիկ պառուղ

\*կայ, բժշկեց  
†Ունաւ, անսնց

- տուաւ: Երբ այս բաները կը զրուցէր, կ'աղաղակէր  
Ան որ լսելու ականջ ունի՞ թող լով:
- 9 Եւ իր աշակերտները կը հարցնէին իրեն՝ ըսելով
- 10 թէ Խնչ պիտի ըլլայ այն առակը: Ան ալ ըստա,  
Զեղի արտած է գիտանոլ Աստուծոյ թագաւորու-  
թեամ խորհուրդները, լոյց ուրիշներուն առակնե-  
րով է Խօսէ. որպէս զի անսնելով չաեսնեն, և լսե-  
լով չիմնանան:
- 11 Արդ առակը այս է. Սերմը Աստուծոյ խօսքն է:
- 12 Ու Ճամբուն քայլնները անոնք են՝ որ կը լսեն, ու  
եաքը Ստատոնայ կու գոյ, անսնց սրտէն կը հանէ  
խօսքը, որպէս զի չըլլայ թէ հաւատան ու փրկուին:
- 13 Եւ ապառաժին վրայինները անաւ + էն՝ որ կը կը լսեն,  
ուրախութեամը կ'ընդունին խօսքը, լոյց արմատ  
չաւնին, ատեն մը կը հաւատան, ու փորձութեան
- 14 Ժամնանկ կը հեռանան: Եւ փուշերուն մէջ ինկածը  
անոնք են՝ որ կը լսեն, բոյց հոգերով ու հարստու-  
թիւնով և ոյս կետնքին ցանկութիւններովը զրա-
- 15 ղած ըլլալով կը խեղդուին և անպատուղ կ'ըլլան: Խոկ  
աղէկ հոդի մէջ շանուածք անոնք են՝ որ բարի և յօ-  
ժար որտով լսելով խօսքը կ'ընդունին ու համբերու-  
թիւնով պատող կ'ուստոն:
- 16 Զկայ մէկը որ ճբագ վառէ ու ամանի մը տակ կամ  
մահիմին ներքե գնէ, հապա աշտանակի վրոյ կը
- 17 գնէ, որպէս զի ներս մանողները լսյոր տերնեն Վասն  
զի չկայ ծածուկ բան մը որ պիտի չյայտնաւի, ոչ ալ  
գաղատկ բան մը որ պիտի չգիտցուի ու երեան չելլէ:
- 18 Ուստի նայեցէր թէ Խնչպէս կը լսէր. քանզի ով որ  
անի՞ անոր պիտի տրուի, և ով որ չունի՞ պին ալ զոր  
ինք կը կարծէ թէ ունի, անկէ պիտի տանուի:

- 19 Եւ անոր մողը ու եղացըները իրեն եկան, ու բաղը  
20 մաքենչն չէին կընար անոր քավ երթալ Եւ անոր  
իմացուցին՝ ըսելով՝ Քու մայրե ու եղացըներդ գուրը  
21 որ կայսեր են, ու քեզ տեսնել կ'ուզեն: Եւ անիկո  
պատասխան տալալ ըսաւ անոնց, Խմ մայրս ու իմ  
եղացըներս ասներ, որ Աստուծոյ խօսքը կը լսեն  
ու զանիկա կը կատարեն:
- 22 Ու եղաւ որ օր մը նաւը մտաւ ինք և իր աշակերտ-  
ներն ալ, ու ըսաւ անոնց, Ծովակին միւս կողմը անց-  
նինք. և ճամբայ ելան: Ու երբ նաւով կ'երթացին,  
ինք քննցաւ, ու հօփի փաթորիկ մը իջաւ ծավակին  
վրայ, և առաջ կը լեցուէր, ու իրենք վասնդի մէջ  
էին: Մատկան, արթնցոցին զանիկա ու ըսին, Վար-  
դապետ, վարդապետ, ահա կը կարուինք. ան ալ  
ելաւ սասաեց հօփին ու ջուրերուն խռովութեանը, և  
25 հանդարակեցաւ, ու խաղաղաթիւն եղաւ: Եւ ըսաւ  
անոնց, Ո՞ւր և ձեր հաւատքը, և անոնք վախի մէջ  
ինկած՝ զարմացան, ու իրարու կ'ըսէին, Սրդեզը ո՞վ  
է տափկա՞ որ հովերուն ու ջուրին ալ հրաման կո-  
տայ, և կը հնապանդին տարի:
- 26 Ու նաւելով իջան \*Գագարացաց երկիրը, որ Գա-  
27 լիւեայի դիմացի կողմն է: Եւ ինք ցամաքը ելլելսն  
պէս՝ ոյն քաղաքէն մարդ մը ելաւ դիմացը, որուն  
ներսը շատ տանենէ ի վեր գեւեր կային. ու անիկա  
հանդերձ չէր հագներ, ոչ ալ տան մէջ կը ընակէր,  
28 հազար գերեզմաններու մէջ: Եւ Յիսուսը տեսնելով  
աղաղակեց ու ինկաւ անոր տաջե, ու բարձր ձայ-  
նով ըսաւ, Դուն ինձի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս,

\*Ոյնակ, Գերգեացաց

- Որդի Աստուծոյ Բարձրելցը. կ'աղաւէմ քեզի, զիս մի  
տանջեր: (Վասն զի հրամացեց պլոդ գիլին որ ոյն  
մարդէն ելլէ, որսիչեաև շատ տանեն էր որ զանիկա  
յափշտակեր էր, և ու իկա շղթաներով ու ստնակա-  
պերով կապուած կը պահուէր, բայց կապերը կը  
30 կարտիք ու գեէն անսպատը կը քշուէր:) Հարցուց  
անոր Յիսուս ու ըսաւ, Անունդ ի՞նչ է. ան ալ ըսաւ,  
Լէդէն, վասն զի շատ գեւեր մտեր էին անոր ներսի-  
31 դին Եւ կ'աղաւէմ անոր որ անդունդը երթալու  
հրաման չընէ երենց: Եւ այն տեղ շատ խողերու  
երամակ մը կար, որոնք լեռը կ'արածուէին, ու աշա-  
չեցին անոր որ իրենց հրաման տայ անոնց մէջ մտնե-  
լու. և հրաման տուաւ անոնց: Ու գեւերը մարդէն  
ելլելով խողերուն մէջ մտան ու երամակը գահավէժ  
34 տեղէն ծովակը վազեց ու խեղդուեցաւ: Եւ խոզա-  
րածները սցա եղած բանը տեսնելով փախան, ու  
35 պատմեցին բարձրոք ու ագարակները, Եւ բարձր  
կըն եղած բանը տեսնելը, ու եկան Յիսուսի, և  
գտան այն մարդը՝ ուրիշ գեւեր ելլը էին, հազուած  
ու խելքը վրան Յիսուսի ապեկուն քով նստած, ու  
36 վախացան: Եւ անոնք որ տեսեր էին, պատմեցին անոնց  
37 թէ ի՞նչպէս գիւտահարը ազատեցաւ: Եւ Գագարաց-  
ւոց շջակայ տեղերը գտնուող բոլոր բազմութիւնը  
կ'աղաւէմ անոր, որ իրենցմէ: Երթայ, վասն զի մեծ  
վախավ բանուած էին, ան ալնաւը մտնելով ետ գար-  
ձաւ: Եւ այն մարդը՝ ուրիշ գեւեր ելլը էին, կ'աղա-  
չեր անոր որ հետք ըլլոյ, բայց Յիսուս արձակեց զա-  
39 նիկա ու ըսաւ, Գագարաց քու տունդ, ու պատմէ: ի՞նչ  
որ Աստուծած քեզի ըրաւ. ան ալ գնաց, ու բոլոր  
քաղաքին մէջ քարոզեց ինչ որ Յիսուս իրեն ըրաւ:

- 40 Ու երբ Յիսուս ետ գարձաւ, ժողովութքը զանիկա  
